

չարաթ իրիկունն : Եւ առ հասարակ ամենայն
 խաչապաշտք աղաղակեն եւ պար առեալ շուրջ
 զգերեզմանաւ Քրիստոսի երգեն իւրեանց լեզ- 135
 վաւ եւ լալով հայցեն դալ լուսոյն : Եւ կար-
 զաւորքն ամենայն ազգաց զգեստաւորին ա-
 ռաջնորդօք : Ապա եւ մեր առաջնորդն ողորմ
 ձայնիւ եւ ողբով ասէ ժողովրդեանն . Չգաստ
 կացէք եւ զգոյշ լերուք ի մեղաց , զի մերձեալ 140
 է գալուստ լուսոյն . չի լինի թէ ձեր մէջն խոռով
 մարդ կայ կամ յխաղահ կամ պոռնիկ , կամ
 թերահաւատ կամ անզեղջ կամ անխոստո-
 վանք . հանց իմանայք որ վասն մեղաց մերոց
 արդելու Քրիստոս զլոյսն . եւ այլ բազում բանս 145
 խօսի եւ խրատ . ապա տայ ասել իրեք Տէր
 ողորմեա ողբաձայն : Չկնի իրեք անգամ գո-
 չեն արք եւ կանայք երկիցս , ծերք եւ տղայք ,
 թէ Լուսաւորչին փառօք փառք տամք Աստու-
 ծոյ . եւ ասեն չարական . Լուսաւորեա Երուսա- 150
 դէմ , զի հասեալ է լոյս Քրիստոս . դարձեալ՝
 Ուրախ լեր սուրբ Եկեղեցի . եւ յանկարծակի
 լինի որոտում եւ գոռացմունք , մինչեւ սառա-
 նիլ ոմանց . ապա սկսանին դալ ազանիք , եր-
 թեւեկ առնել ի գմպէթն . դարձեալ կարդան եւ 155
 աղաղակեն՝ Տէր ողորմեա՝ ժողովուրդն , եր-
 կիցս եւ երիցս , եւ թէ Լուսաւորչին փառօքն
 փառք տամք Աստուծոյ : Դարձեալ գոռայ եւ
 թնդայ սուրբ գերեզմանն Քրիստոսի . եւ պատ-
 բաստքն եւ զգեստաւորեալք կարգաւորք առ- 160

146 տա : — 146, 156, 166 ողորմեայ : — 150 յերու-
 սադէմ : — 159 թընթայ :